

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ**

**«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19-րդ հոդվածի «15. Տրանսպորտի բնագավառ» բաժնի 15.5-րդ և 15.6-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<15.5. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից՝ - մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման համար՝ տարեկան	բազային տուրքի 10- ապատիկի չափով
15.6. Ֆիզիկական անձանց կողմից մարդատար-տաքսի մեկ ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման համար	
Երևան քաղաքում՝ ամսական	Բազային տուրքի 9,5- ապատիկի չափով
Մարզերում՝ ամսական	բազային տուրքի 5,6- ապատիկի չափով
Սահմանամերձ բնակավայրերում՝ ամսական	Բազային տուրքի 1,4- ապատիկի չափով
Էլեկտրոնային հարթակներով պատվերների ընդունմամբ ֆիզիկական անձանց կողմից մարդատար-տաքսի մեկ ավտոմոբիլով օրական մինչև չորս ժամ տևողությամբ ուղևորափոխադրումների կազմակերպման համար	
Երևան քաղաքում՝ ամսական	Բազային տուրքի 4,7- ապատիկի չափով
Մարզերում՝ ամսական	Բազային տուրքի 2,8- ապատիկի չափով
Սահմանամերձ բնակավայրերում՝ ամսական	Բազային տուրքի 0,7- ապատիկի չափով

Ընդ որում, պետական տուրքը գանձվում է ըստ հայտատու ֆիզիկական անձի գործունեության վայրի:

Միևնույն հաշվետու ժամանակաշրջանում տարբեր մարզերում (այդ թվում՝ Երևան թվում՝ Երևան քաղաքում) կամ տարբեր մարզերի (այդ թվում՝ Երևան

քաղաքի) միջև մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրում իրականացնելու դեպքում կիրառվում է սույն հոդվածի 15.6-րդ մասով սահմանված պետական տուրքի ամսական դրույքաչափերից առավելագույնը:

**Հոդված 2.** Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ պարբերությունները:

**Հոդված 3.** 34-րդ հոդվածի վերջին պարբերությունը շարադրելի ենտկյալխմբագրությամբ.

<<Սույն օրենքի 19-րդ հոդվածի 15.5-րդ և 15.6-րդ ենթակետերով սահմանված պետական տուրքի հերթական վճարումը կատարվում է ոչ ուշ քան համապատասխանաբար հաջորդ հերթական տարվական ամսվա առաջին օրը:>>:

**Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: